ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1/26-BSL

«ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» դեկտեմբեր 2025 թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Մայա Հովհաննեսի Գրիգորյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Գրադարանային հավաքածուների պահպանման և համալրման, ընթերցողների սպասարկման, գրադարանային միջոցառումների կազմակերպման նպատակով Կոմիտեն Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի «Գիտական գրադարանային ծառայություններ» միջոցառմամբ (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված **150 630 100** (մեկ հարյուր հիսուն միլիոն վեց հարյուր երեսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարը հատկացնում է Կազմակերպությանը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1. ստուգելու Կազմակերպության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը,

2.1.2. պահանջելու Պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ ֆինանսական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվություն:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի հրաժարվելու պարտավորությունների կատարումից՝ Ծրագրով նախատեսված գումարը չհատկացվելու դեպքում:

2.3. Կոմիտեն պարտավոր է Կազմակերպությանը տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1. Կոմիտեի պահանջով տրամադրել Պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր և ընթացիկ տեղեկատվություն,

2.4.2. Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է **150 630 100** (մեկ հարյուր հիսուն միլիոն վեց հարյուր երեսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակով: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7.3. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	**ՀՀ ԳԱԱ «Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ**
ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/6
Հ/հ 900011033140,	Հ/հ 900018005448,
ՀՎՀՀ 02704199	ՀՎՀՀ 00009631
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
ԿԱՐԵՆ ԲՈՐԻՍԻ ՂԱՐԻԲՅԱՆ	ՄԱՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ. Տ.	Կ. Տ.